Գ. Ռ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՍՍ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բեգլարի Ջահուկյանի ծննդյան 75 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակը:

Գ. Ջահուկյանը այն եզակի նուսիտավորներից է, որն իր գիտակցական ողջ կյանքը անմնացորդ նվիրեց հայրենական գիտությանը, մասնավորապես՝ լեզվաբանության զարգացման գործին՝ դրա մեջ տեսնելով իր կյանքի նպատակը: Հավատարիմ մնալով գիտնականի պատվավոր կոչմանը, բնածին ընդունակությունները զուգակցելով բացառիկ աշխատասիրության հետ՝ Գ. Ջահուկյանը ստեղծեց գիտական մեծարժեք աշխատություններ, որոնց մեջ հիմնավոր լուծումներ ստացան ընդհանուր ու համեմատական լեզվաբանության և հայագիտության բազմաթիվ կենսական հարցեր: Վաստակաշատ գիտնականի ուսումնասիրությունները աչքի են ընկնում հարցերի լայն ընդգրկումով, խոր ու մանրակրկիտ վերլուծություններով, անհերքելի ապացույցներով, գիտական հշգրիտ ընդհանրացումներով, հիմնավորվածությամբ ու կոտ տրամաբանությամբ:

Գ. Ջահուկյանը պրպտուն ու ներհուն գիտնական է, երբեք չի բավարարվում ու զոհանում ձեռք բերածով, անընդհատ նորանոր պրոբլեմներ է առաջ քաշում և լուծում դրանք:

Գ. Ջահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին, ՀՍՍ Դալիջանի շրջանի Շահնազար գյուղում: 1927—35 թթ. սովորել է Ստեփանավանում, այնուհետև ուսումը շարունակել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում: Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը գերազանցության դիպլոմով ավարտելուց հետո 1942 թ. ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան՝ ընդհանուր լեզվաբանության գծով՝ աշակերտելով մեծ հայագետ Հր. Աճառյանին: 1942—1943 թթ. ծառայել է իրանական բանակում, իսկ 1943—44 ուստարում, որպես մայրենի լեզվի ուսուցիչ, պաշտոնավարել է Ախտալայի դպրոցում: 1944 թ. վերադարձել է Երևան՝ ասպիրանտական ուսումնառությունը շարունակելու նպատակով:

1947 թ. հաջողությամբ պաշտպանում է բեկնածուական, 1955-ին՝ դոկտորական դիսերտացիա: 1958 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, 1965 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում: Հայագիտությանը մատուցած ակնառու ծառայությունների համար Գ. Ջահուկյանը 1968 թ. ընտրվում է ՀՍՍ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1974 թ.՝ իսկական անդամ:

Ցավագնց լայն է անվանի հայագետի հետաքրքրությունների շրջանակը: Այն ընդգրկում է թե՛ հայերենի համեմատական քերականությունը, թե՛ հայոց լեզվի պատմությունը, թե՛ բարբառագիտությունը, թե՛ բառագիտությունն ու բառարանագրությունը և թե ժամանակակից հայոց լեզվի տեսությունն ու հայ լեզվաբանության պատմությունը: Դեռ ավելին, նրա հետազոտությունների մի մասը վաղուց է դուրս եկել հայագիտության սահմաններից՝ իր մեջ ներա-

ռելով նաև ընդհանուր լեզվաբանության, հնդեվրոպաբանության, նոստրատիկ լեզվաբանության, ուրարտագիտության բնագավառները:

Մեծ է Դ. Ջահուկյանի ներդրումը հայ բերականության գիտական պատմության ստեղծման մեջ: Նրա «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954), «Գրաբարի բերականության պատմություն» (1974) աշխատությունները հայերենի բերականության ամբողջական պատմության ստեղծման արժեքավոր կոթողներ են: Դրանց մեջ վաստակաշատ լեզվաբանը ներկայացնում է հայ բերականագիտական մտքի զարգացման ընթացքը՝ ըստ արժանվույն գնահատելով հայ բերականներից յուրաքանչյուրի բերած նորությունն ու ներդրումը այդ բնագավառում: Հսկայական է մեծավաստակ հայագետի դերը նաև հայոց լեզվի զարգացման ու կառուցվածքի ուսումնասիրության մեջ: Այդ տեսակետից աչքի են ընկնում հատկապես «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» (1967), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Հայոց լեզվի համեմատական բերականություն» (1989) աշխատությունները, որոնց մեջ տրվում են գրաբարի ու ժամանակակից հայերենի հոլովման համակարգն ու նրա ծագումը, հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը: Այդ աշխատությունների օրգանական շարունակությունն է կազմում «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) հիմնարար ուսումնասիրությունը, որի մեջ նորագույն լեզվաբանության հայեցակետից համակողմանիորեն ու գիտական խորությամբ քննության են առնվում արտահայտության ուսմունքի, բերականության և բերականական միավորների փոխակերպման ու փոխանցման գրեթե բոլոր կարևորագույն հարցերը՝ ստեղծելով ժամանակակից հայերենի ամբողջական ու կատարյալ տեսությունը: Անուրանալի է Դ. Ջահուկյանի ներդրումը հայերենի բարբառագիտության բնագավառում: Կիրառելով լեզվաբանական բոլորովին նոր սկզբունքներ ու մեթոդներ հայերենի բարբառների դասակարգման մեջ՝ նա վեր հանեց բարբառների միջև եղած ընդհանրություններն ու զանազանությունները՝ հստակորեն տարբերակելով բարբառները ենթաբարբառներից ու խոսվածքներից:

Դ. Ջահուկյանի ուսումնասիրությունների մեջ կարևոր տեղ է գրավում նաև «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը (1960, 1962), որտեղ գիտական բարեխղճությամբ ու հմուտ վերլուծություններով, տարածական լայն ընդգրկումով տրվում է լեզվաբանության պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը: Հեղինակը, լեզվաբանության պատմությունը բաժանելով մի շարք շրջանների ու ենթաշրջանների, ներկայացնում է լեզվաբանական հիմնական ուսմունքները, ուղղություններն ու հայեցակարգերը, վեր հանում նրանց էությունն ու բնորոշ կողմերը, նշում լեզվաբանական մտքի զարգացման գործում յուրաքանչյուր հեղինակի ունեցած դերն ու մասնակցությունը: Այսինքն՝ նկարագրելով լեզվաբանության, իբրև առանձին գիտաճյուղի, առաջացման ու զարգացման ընթացքը՝ Դ. Ջահուկյանը ցույց է տալիս տարբեր երկրներում ու տարբեր ժամանակներում առաջ եկած տեսություններն ու ուղղությունները և որոշակի հատկանիշների հիման վրա տալիս է լեզվաբանության պատմության նոր շրջանաբաժանում:

Հայերենի և հնդեվրոպական ու կովկասյան լեզուների աղերսակցությանն ու փոխհարաբերությանն են նվիրված հեղինակի «Հայերենը և հին հնդեվրոպական լեզուները» (1970), «Հընդեվրոպական, խուռա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունը» (1968), «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» և այլն, որոնք լուրջ ներդրում են համեմատական լեզվաբանության բնագավառում և հանաչում են գտել հնդեվրոպաբանների և կովկասագետների շրջանում:

Ջահուկյանը առաջիններից մեկն է, որ զբաղվել է նոստրատիկ լեզվաբանության հարցերով և առաջինն է, որ նոստրատիկ լեզվաբանության ոլորտն է ներառել խուռա-ուրարտական լեզվաընտանիքը: Քննելով հայերենի և առաջավոր Ասիայի ու հին բալկանյան լեզուների առնչությունները՝ նա հատուկ ուշադրություն է դարձրել հայսուա լեզվին՝ այն դիտելով որպես հայերենի նախնական վիճակ, որի վրա ղզալի ազդեցություն են թողել խեթա-լուվական լեզուները: Նա լեզվական մակարդակների ու միավորների նոր համակարգում է կատարել՝ նոր մոտեցում հանդես բերելով լեզվական կաղապարին և իր մի շարք ուսումնասիրություններում հաջողությամբ կիրառել է այդ մեթոդը ու ստիպհանարար հանգել է համընդհանուր լեզվի կաղապարի և լեզվի համընդհանուր տեսության գաղափարին՝ կատարելով բազմաթիվ հիշատումներ նաև մասնավոր հարցերի վերաբերյալ (հնչույթ, ձևույթ, շարույթ): Առաջարկել է գիտակարգերի ու գիտաճյուղերի նոր դասակարգում՝ հստակորեն որոշելով լեզվաբանության կառուց-

վածը և տեղը գիտություններ համակարգում: Վերջին տարիներին Ջահուկյանի առջև ծառացավ հայոց լեզվի ամբողջական պատմության ստեղծման պրոբլեմը: Այդ կարևոր խնդրի իրականացման համար ինստիտուտի կարող ուժերը կենտրոնացվեցին նշված պրոբլեմի լուծման վրա: Աշխատանքը հաջողությամբ իրականացվում է սկանավոր հայագետի ակտիվ մասնակցությամբ ու գիտական ղեկավարությամբ: Հարկ է նշել, որ ուսումնասիրության ամենածանր ու դժվար մասը՝ նախագրային շրջանի հայոց լեզվի պատմությունը, գրվել է նրա կողմից. «Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան)» խորագրով (Երևան, 1987), որը, այդ բնագավառի ամենածանրակշիռ ուսումնասիրությունը լինելով, արժանացել է պետական մրցանակի:

Վերը հիշատակված աշխատության մեջ տրվում է հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանի ընդարձակ բնութագրությունը, համակողմանիորեն բնութագրվում են հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիների կյանքն ու մշակույթը, վերականգնվում են հայերենի հնդեվրոպական տարրերը, և, ցույց տալով հայերենի տեղը հնդեվրոպական բարբառների մեջ, բացահայտվում են հայերենի վաղնջական շրջանի կառուցվածքի ու բառապաշարի հիմնական կողմերը, ներկայացվում է հայոց լեզվի հնագույն շրջանի պատկերը, քննվում են նաև հայերենի և ուրիշ լեզուների փոխազդեցության հարցերը: Առաջին անգամ Ջահուկյանը փորձում է շրջանաբաժանման ենթարկել հայերենի նախագրային շրջանի պատմությունը՝ առանձնացնելով 3 շրջան (նախահայկական, վաղնջական, հնագույն): Ուսումնասիրությունը նոր լույս է սփռում հայերենի հնագույն շրջանի պատմության մի շարք հարցերի լուսաբանման վրա:

Ջահուկյանը հեղինակ է երեք տասնյակից ավելի մենագրությունների և 100-ի հասնող գիտական հոդվածների ու հրապարակումների: Նրա հոդվածների մի զգալի մասը լույս է տեսել արտասահմանում, օտար լեզուներով՝ մեծ հանչում բերելով հեղինակին:

Գ. Ջահուկյանը գիտական աշխատանքին զուգընթաց զբաղվել է նաև մանկավարժական ու դիտակազմակերպական գործունեությամբ: 40 տարի անընդմեջ դասախոսել է Երևանի համալսարանում: Երկար տարիներ ղեկավարել է օտար լեզուների և ռոմանո-գերմանական բանասիրության ամբիոնների աշխատանքները: 30 տարուց ավելի Գ. Ջահուկյանը բարեխղճորեն, պատասխանատվության բարձր զգացումով ղեկավարում է ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատանքները. չափազանց զուսպ է ու համեստ, երբեք չի թմբկահարում իր հաջողությունների մասին, պահանջկոտ է ինչպես իր, այնպես էլ աշխատակիցների նկատմամբ: Մեծ է նրա դերը նաև կադրերի պատրաստման, որակավորման բարձրացման և առաջխաղացման գործում: Նրա ղեկավարած մասնագիտացված խորհրդում պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական բազմաթիվ դիսերտացիաներ: Ջահուկյանը մեծ ջանքեր է գործադրել աշխարհի լեզվաբանական կենտրոնների հետ ինստիտուտի կապերը ամրապնդելու համար:

Վաստակաշատ գիտնականը ամբողջովին ու անձնուրացորեն նվիրված է հայագիտությանը և ամեն ինչ անում է նրա զարգացման և ինստիտուտի առաջատար դիրքերի պահպանման համար:

Գ. Ջահուկյանը շարունակում է ստեղծագործել նախկին ավյունով ու եռանդով: Նա ունի շատ ծրագրեր ու մտահղացումներ: Մաղթենք մեր հոբելյարին հաջողություն, երկար տարիների կյանք՝ ի իրականացումն իր մտահղացումների ու ծրագրերի, գիտական արգասավոր ու բեղմնավոր աշխատանք՝ ի փառս հայագիտության ու հայ մշակույթի հետագա զարգացման:

Հ. ՕՀԱՆՅԱՆ